ամենախիստ խօսքերով դատապարտում է ծխողներին եւ նրանց անմարդկային սովորութիւնը: Աւելին նա որոշում է ցոյց տալ թութունի ծագման արմատները՝ անդրադառնալով Ադամի եւ Եւայի դրախտից արտաքսուելու պատմութեանը: Նա համոզուած է, որ նրանց խաբող օձը թեւաւոր է եղել, եւ Արարչի անէծքից յետոյ, երբ նրա թեւերը թափուել են, դեւերը դրաք հաւաքել եւ հողի մէջ տնկելով՝ բազմացրել են.

Ասեն՝ Գտաք դեղ կորստեան
Ապականիչ մարդկան հոգւոյն,
Յանէս Յամրես դրախտ կասեն,
Անդ տնկեցին, եղեւ թութուն…
Սերմանեցին զչար սերմն աշխարհիս,
Ակնատ է ցեց մարդկան հոգւոյն:

Հեղինակը իր պարսաւանքի խօսքերում անմասն չի թողնում նաեւ ծխող հոգեւորականներին, ամօթանք տալով նրանց, որ չար օրինակ են ծառայում հաւատացեալներին՝ իրենց այդ բիրտ սովորութեամբ:

Աշխարհականքն զայն տեսանեն,
Համարձակեալ յարին ի նոյն,
Ասեն՝ Երէցն կարդացող,
Մեք եմք անգէտ, նա է գիտուն:
Նա է հովիւ, մեք եմք ոչխար…
Նա որ չասէ, թէ մեղք է սա,
Մեզ ինչ փոյթ է այդ բաներուն: